



Ե Ր Կ ՈՒ Լ Ն Յ Ր

1896-ի կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան էջմիածին: Նրանց մեջն էր ծերունի Տեր Սարգիսը:

— Հայրիկի Աջը կուզեմ համբուրել,— խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին:

— Բարով, Տեր Հայր,— Աջը մեկնեց Հայրիկը:

— Քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

— Ո՞րտեղից կուզաս:

— Սասունի կողմերեն, ես Ա-ի Տեր Սարգիսն եմ...

— Ա-ի Տեր Սարգիսը...

— Այո՛, Հայրիկ:

— Է՞...

— Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալնեցին, վառեցին. մնացի այսպես...

— Է՞ հիմի...

— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, ես... այնպես եկել եմ... եկել Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն-ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում: Երկուսն էլ լուռ էին:

— Քանի՞ որդի կորցրիր, Տեր Սարգիս,— գլուխը վեր քաշեց Կաթողիկոսը:

— Ամենքը միասին քսան, Հայրիկ:

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար,— պատասխանեց Հայրիկը,— այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, Տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

— Ո՞ւմ վիշտն է մեծ, Տեր Սարգիս:

— Հայրիկինը...

— Դե ե՛կ, Տեր Սարգիս, մոտ եկ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր Հայոց Կաթողիկոսին... նրա առջև խոնարհած էր Հայոց Հայրիկը...

(Թիֆլիս, 6 (19) նոյեմբերի 1907 թ.)

